# ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Աղէքսանդրապոլի վիճակի եկեղեցական ծխական դպրոցների 1916/17 ուսմ. տար.

Աղէքսանդրապոլի վիճակը Երևանի նահանգի ամենահայաշատ գաւառներից մէկն է։ Գաւառի 128 գիւղերը քաղաքի հետ ունեն մօտ 200,000 բնակչութիւն։ Այս գաւառի մէջ, շնորհիւ աղքատութեան, տգիտութիւնն է թագաւորում։ Լուսաւորութիւնը շատ դժուարութեամբ է թափանցում գիւղերը, ուստի և դպրոցների թիւը շատ քիչ է։ 1913/14 ուսմ. տար. ընթացքում վիճակի գիւղերում գոյութիւն ունէին 29 դպրոց միայն։ Ուրեմն 98 գիւղերում դպրոց չկար։ Սորանից ընթերցողը կարող է գաղափար կազմել և ամբողջ գաւառի մտաւորի մասին։ Պէտք է ասել, որ գաւառի մի քանի գիւղերում կային նաև պետական դպրոցներ։ Թէ ինչու գիւղերում դժուարութեամբ են ծխական դպրոցներ բացուել, դորա պատճառներն են. նախ՝ որ և է գիւղական գրագիր, իրեն թիկունք ունենալով տանուտէրին, կամ պրիստաւին, բռնի կերպով համախօսականներ է կազմել տուել պետական դպրոցներ բանալու համար, որոնց պահպանութեան համար որոշ գումարներ էր յատկացնում գիւղացին, այդ դպրոցներից շատերը չեն բացուել, սակայն ժողովրդի կոպէկները շարունակ գանձարան է մտել։ Երկրորդ. Հոգևոր պաշտօնների գլուխ անցած անձինք գիւղերը չեն դուրս եկել և ծխական դըպրոցների բացման մասին հոգս չեն քաշել։ Իսկ 1914 թուից սկսած դպրոցների թիւը հետզհետէ աւելանում է շնորհիւ այն հանգամանքի, որ փոխանորդ Արտակ վարդապետը շարունակ գիւղերը շրջելով, յորդորում է գիւղացիներին ծխական դպրոցներ բաց անել. սահմանել է տալիս այդ դպրոցների պահպանութեան համար ծխական տուրքեր և ինքն էլ տարեկան նպաստներ է նշանակել տալիս Բալե-

գործական հաստատութեանց: Միևնոյն ժամանակ հոգս է քաշում եղած դպրոցների պահպանութեան համար:

Այսպիսով, երեք տարուայ ընթացքում նոր դպրոցներ բացւում են 26 գիւղերում, և սոյն 1616/17 ուսմ. տար. մէջ գոյութիւն ունէին 55 դպրոց: Դպրոցների ծաղկումը և աւելանալը կապուած էր փոխանորդի շրջագայելու հետ, և եթէ չլինէր պատերազմը, այդ դպրոցների թիւը աւելի շատ կլինէր: 1916/17 ուսմ. տար. դպրոցների պատկերը պարզ կերևայ ստորև գրուած աղիւսակից:

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

Աղէքսանդրապօլի շրջանի ծխ.-դպրոցների 1916/17 ուսմ. տ.

| | Գ Ի Ւ Ղ Ե Ր Ը | Տարեկան նպաստ. | | | | | | Ծխական տուրք | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Դպր. ֆօնդ | | Բարգ.-ընկ. կենդր. կոմ. | | Կուլտ. միութիւն | | | |
| | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
| 1 | Ղոնախղրան | — | — | 200 | — | — | — | 200 | — |
| 2 | Հաջինազար | — | — | — | — | — | — | 200 | — |
| 3 | Մեծ Քեափանակ | — | — | — | — | — | — | — | — |
| 4 | Ջրախլի | — | — | — | — | — | — | — | — |
| 5 | Դիրաքլար | — | — | 100 | — | — | — | — | — |
| 6 | Մեծ Դիւզքեանդ | — | — | 200 | — | — | — | — | — |
| 7 | Ղազանչի | — | — | — | — | — | — | — | — |
| 8 | Նորաշէն | — | — | — | — | — | — | — | — |
| 9 | Հաջի Խալիլ | 100 | — | — | — | — | — | — | — |
| 10 | Մեծ Բաշ գիւղ | — | — | — | — | — | — | — | — |
| 11 | Հառիճայի վանքի | — | — | — | — | — | — | — | — |
| 12 | Արթիկ | — | — | — | — | — | — | — | — |
| 13 | Մահմուտջուղ | — | — | — | — | — | — | — | — |
| 14 | Հոռոմ | — | — | 200 | — | — | — | 200 | — |
| 15 | Իմրխան | 150 | — | — | — | — | — | 150 | — |
| 16 | Խլի Ղարաքիլիսա | — | — | — | — | — | — | — | — |
| 17 | Դահարլի | — | — | — | — | — | — | — | — |
| 18 | Բողազքեասան | 100 | — | — | — | — | — | — | — |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | Նոր Արթիկ . . | — | — | — | — | — | — | — | — |
| 20 | Ջեթի՞անքով . . | 100 | — | 150 | — | — | — | — | — |
| 21 | Ղշլաղ . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 22 | Գեօրան . . . | — | — | 100 | — | — | — | 100 | — |
| 23 | Եագուբլի . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 24 | Համամլու . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 25 | Մեծ Ղարաքիլիսա . | — | — | — | — | — | — | — | — |
| 26 | Ջաջուռ . . . | — | — | — | | — | — | 200 | — |
| 27 | Մեծ Քէյթի . . | — | — | — | — | — | — | 200 | — |
| 28 | Զորլի . . . | — | — | — | — | — | — | — | — |
| | ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ ԴՊՐՈՑՆԵՐ 1914—1917 Թ. | | | | | | | | |
| 29 | Մեծ Արխուալի . | 250 | — | 250 | — | 150 | — | 500 | — |
| 30 | Հայ Փամբ . . | — | — | — | | — | — | — | — |
| 31 | Մունջուխլի . . | — | — | — | — | — | — | — | — |
| 32 | Համզաչիման . . | 200 | — | — | — | — | — | — | — |
| 33 | Ագքիլիսա . . . | — | — | 100 | — | — | — | 200 | — |
| 34 | Մօլլագեօքչա . . | 150 | — | — | — | — | — | 400 | — |
| 35 | Սօգիւթլի . . | 100 | — | — | — | — | — | — | — |
| 36 | Բուղդաշէն . . | 200 | — | — | — | — | — | 200 | — |
| 37 | Բոզդողան . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 38 | Տաւշանղշլաղ . . | — | — | — | — | — | — | 200 | — |
| 39 | Բաբոյլի . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 40 | Սուանվերդի . . | — | — | — | — | — | — | 100 | — |
| 41 | Վր. Եներ. Ղանլիջաներ | — | | 100 | — | — | — | 300 | — |
| 42 | Սպիտակ . . . | — | | 100 | — | — | — | 200 | — |
| 43 | Սօնգիւբլի . . | — | — | — | — | — | — | — | — |
| 44 | Մեծ Պարնի . . | — | — | 100 | — | — | — | 600 | — |
| 45 | Ղալթախչի . . | — | — | 100 | — | — | — | 200 | — |
| 46 | Ղզլքիլիսա . . . | 100 | — | — | — | — | — | — | — |
| 47 | Ջոթուռ . . . | 100 | — | — | — | — | — | 150 | — |
| 48 | Ղաչաղան . . . | 100 | — | — | — | — | — | 150 | — |
| 49 | Նալբանդ . . . | — | — | — | — | — | — | 200 | — |
| 50 | Հայ Գեօզալդարա . | — | — | — | — | — | — | 200 | — |
| 51 | Որտնաւ . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 52 | Աղխուլա . . . | — | — | — | — | — | — | — | — |
| 53 | Ղարաքօյու . . | — | — | — | — | — | — | 150 | — |
| 54 | Ղուլիջան . . . | — | — | — | — | — | — | 200 | — |
| 55 | Ծլովխան . . . | 100 | — | — | — | — | — | 200 | — |